ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե-7877

« 10 » հոկտեմբերի 2024թ.

«ՄԻՆՈՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Մ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
(հասցե՝ Կիևյան Փ./ Շ /16/ 8/14)

«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների և փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ՄԻՆՈՆ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում ընկերության գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական,
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,

- 1-ին չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնով նախատեսված՝

Օդորակիչ 9000 BTU-ի մասով հրավերով սահմանված է՝ «Անհրաժեշտ հենակը, մալուխները և խողովակները մինչև 5մ (ըստ անհրաժեշտության) **տրամադրում է Վաճառողը անվճար**:», սակայն ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «Անհրաժեշտ հենակը, մալուխները և խողովակները մինչև 5մ (ըստ անհրաժեշտության) **կտրամադրվի անվճար**:»: Այսինքն՝ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ, թե ում կողմից են ըստ անհրաժեշտության անվճար տրամադրվելու անհրաժեշտ հենակը, մալուխները և մինչև 5մ խողովակները:

«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության երրորդ նախադասությունում սխալ է նշված ռուսերեն լեզվով ընկերության կազմակերպաիրավական տեսակը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հոկտեմբերի 11-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-777